Այս երգի մէջ աչքի է ընկնում մի հանգամանք եւս. աշուղը Հայերին գաղթեցնելու պատճառը վերագրում է Նրան, որ մի ֆալչի կամ հարցուկ խորհուրդ տուեց Շահաբբասին վտարել Հայերին։ Որովհետեւ Հայերի գաղթականութիւնն առաջ բերող պատճառների քննութիւնը շուտով մեր քննութեան առարկայ պէտք է լինի, ուստի մենք հարկաւոր համարեցինք եւ աշուղի այդ կարծիքի վրայ ուշադրութիւն հրաւիրել։

Մի այլ ականատես, Հին-Ջուղայի մօտի Շամբ գիւղի բնակիչ եւ Դախավկայ վանքի միաբան Ստեփան վարդապետն ահա ինչ ողբ է յօրինել Հայերի գաղթականութեան առիթով.

"Ափսոս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան եղաք անմեղ անխորհուրդ.
Դերի գնաման աք դէպ ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր թշուառական։

Խարիւր ու խազար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցրիկ երկրէն ոտ դուրս չըդրաք.
Խիմի ձեր խօր մոր գերեզման թողաք,
Ցըներն ու ժամերը ուրիշի տուաք։

Էս սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղքընեարն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն,
Ո՞ւմն աք թողման դուք, որ գնաման աք.
Էսպէս կընի՞ որ մոռանում աք։

Վախում ամ էնպէս մտքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մտքերնուդ չընկնի.
Բարի ձեր որդուց թոռանց պատմեցէք.
Էսպէս խայրենիքն քանդած թողեցիք։